Կորպորատիվ պատասխանատվություն

Corporate Responsibility

ՎիվաՍել-ՄՏՍ-ը Հայաստանին
VivaCell-MTS to Armenia
2009



Edition 3



VIVAcell MTS

ՎիվաՍել–ՄՏՍ–ը Հայաստանին,
Կորպորատիվ պատասխանատվություն
Մաս 3

Երևան
«Դ–Տելեկոմ» ՓԲԸ
2009

ՀՏԴ 654
ԳՄԴ 32. 882
Վ 669

Վ 669 ՎիվաՍել–ՄՏՍ–ը Հայաստանին,
Կորպորատիվ պատասխանատվություն.–Մաս 3
–Եր.: «Ղ–Տելեկոմ» ՓԲԸ, 2009,–72 էջ:

Սույն գիրքը տպագրվել է «Ղ–Տելեկոմ» ՓԲԸ
պատվերով և նախատեսված չէ վաճառքի համար:

ՀՏԴ 654
ԳՄԴ 32. 882

ISBN 978–99941–2–317–9 © «Ղ–Տելեկոմ» ՓԲԸ, 2009թ.

Հարգելի՛ ընթերցող

Մենք համարձակություն ունենք երազելու և այդ երազանքներն իրակա-նություն դարձնելու, որովհետև անտարբեր չենք:

Ինչպես միշտ, այնպես էլ այսօր, ՎիվաՍել-ՄՏՍ-ը նպատակ ունի ճա-նապարհ հարթել և առաջնորդել, օրինակ ծառայել կորպորատիվ պա-տասխանատվության մշակույթի ձևավորման և զարգացման համար: Լինելով գործարար աշխարհի ներկայացուցիչ, մենք նախ Հայաստա-նի կորպորատիվ քաղաքացի ենք և պետք է դրսևորենք կորպորատիվ պատասխանատու առաջնորդին հարիր վարքագիծ՝ հմտություններ, արժեքներ և վերաբերմունք, որոնք անհրաժեշտ են մեր հիմնական շա-հառուին՝ հասարակությանը, տարբեր մակարդակներում ի հայտ եկող խնդիրների լուծմանն աջակցելու հարցում:
ՎիվաՍել-ՄՏՍ-ը չի փորձում կորպորատիվ պատասխանատվության իր մոդելը պարտադրել մյուսներին: Այս առումով, 2009-ի հոկտեմբե-րին անցկացված կոնֆերանսը՝ նվիրված կորպորատիվ պատասխա-

Dear Readers,

We dare to dream, and to turn dreams into realities,- all that because we care!

As always declared, VivaCell-MTS aims at paving the way and leading by example the implementation of a sustainable approach in the Corporate Responsibility culture. We, as business entities, are before everyone else corporate citizens of Armenia, and we need to show responsible leadership of Corporate Responsible Management that is able to identify the critical skills, values and attitudes needed for us to help society, our major stakeholder, to cope with many challenges on all levels.

VivaCell-MTS does not attempt to impose its CR model on others; the Corporate Responsibility model and the scope of activities may vary from one organization to the other. In this regards, we managed to hold a CR seminar on October 2009. This seminar served as a guiding tool demonstrating the

նատվությանը, կարողացավ ներկայացնել այս մոտեցման հիմնական սկզբունքները և ընկերության ռազմավարության մեջ ինտեգրելու ուղիները, լավագույնս ծառայեցնելով հասարակությանը, որի մեջ գործում է ընկերությունը: ՎիվաՍել-ՄՏՍ-ն, ինչպես միշտ, աշխատում է թափանցիկ և պատրաստակամ է թե՛ գիտելիքները կիսելու, թե՛ սովորելու առումով, քանի որ զարգացումը և նորարար մոտեցումների ձևավորումն անհնարին են մեկուսացման մեջ:

Կորպորատիվ պատասխանատվությունը երկար ճանապարհ ունի անցնելու, այն պահանջում է հետևողականություն և համառություն, սակայն ամենից առավել՝ հավատ: Կորպորատիվ պատասխանատվությունը Հայաստանում սկսում է հասարակության կողմից ընկալվելու իր երկար ուղին: Կազմակերպությունները սկսում են հավատալ և այդ սկզբունքն իրենց գործունեության մաս դարձնել՝ թեկուզ ամենափոքր քայլերով: Մեզ համար սա դրական մեկնարկ է, որը պետք է համապատասխան աջակցություն ստանա, որպեսզի զարգանա և ծաղկում ապրի:

Ի՞նչ են նշանակում կորպորատիվ պատասխանատվությունը և կորպորատիվ քաղաքացի լինելը: Ինչպե՞ս պետք է նախապատրաստվենք մենք և ապա՝ նախապատրաստենք ընկերություններն այդ նպատակներով հետագայում առաջնորդվելու համար: Ընկերությունների՝ հասարակության հանդեպ պատասխանատվությանը և դերին, հանրային (այդ թվում՝ հասարակական կազմակերպությունները) և մասնավոր սեկտորների միջև կապին, կորպորատիվ պատասխանատվության տնտեսական զարգացման գործում ունեցած նշանակությանը և կայուն զարգացման տեսանկյունից դրա տարբեր մոդելների կիրառմանն անդրադարձն օգտակար են կորպորատիվ պատասխանատվության մեր մոտեցումը ձևավորելիս:

Մենք ունենք միջոցներ, նախադրյալներ և այն ամենն, ինչ անհրաժեշտ է հավատով լցվելու համար: Միասին մենք ի զորու ենք ավելի լավ ապագա ստեղծել մեր երեխաների համար:

Ռալֆ Յիրիկյան
ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն

initial principles of Corporate Responsibility and how best to integrate it into the companies' strategies to best serve the community we function within. VivaCell-MTS, in its turn, is as usual transparently open to both sharing and learning as no development and innovation are possible in isolation.

Corporate Responsibility is a long way to go, it needs commitment and perseverance but above all we need to believe! CR is now starting its long way of acceptance in Armenian society; organizations are starting to believe and to integrate it even if in a shy way in their businesses. For us it is a good positive start that should be endorsed and properly supported to flourish and grow.

What is good in Corporate Responsibility and corporate citizenship? And how do we need to prepare ourselves to be able to lead our companies toward this aim in the future? The role and responsibility of the corporate sector vis-à-vis the public sector and the bridge between the public (including NGOs) and the private sector, the role of CR in the economic development and which models and issues of CR are relevant within the context of sustainable development,-all these are questions to be addressed to better shape our CR approach.

We have the means, we have the ground and all what we need is to believe. Together we can secure a better future for our children.

Ralph Yirikian
VivaCell-MTS General Manager

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՆԵՐԴՐՈՒՄ

Վերջին տասնամյակում Կորպորատիվ պատասխանատվությունը պարզապես բարեգործության արտահայտումից վերաճել է բիզնես ռազմավարության: Այսօր արդեն Հայաստանում գործող ընկերությունները՝ լինեն մանր, միջին, թե խոշոր բիզնեսի ներկայացուցիչներ, թեև փոքր-ինչ դանդաղորեն, ընդունում են Կորպորատիվ պատասխանատվության գաղափարախոսությունն իրենց ռազմավարության հիմքում: Իսկ սա նշանակում է, որ մեր հասարակությունում զարթոնք է ապրում համաքաղաքացիների, հասարակության և պետության հանդեպ պատասխանատվության զգացումը: Ավելին, գործարար սեկտորի ներկայացուցիչների շրջանում աճում է գիտակցությունը, որ Կորպորատիվ պատասխանատվության գաղափարախոսության վրա հիմնվող գործունեությունը ոչ թե առատաձեռնության դրսևորում է, այլ՝ սեփական գործի հեռանկարային զարգացմանն ուղղված երկարաժամկետ ներդրում:

Կարծում ենք, մեր երկրում նման միտումի ձևավորման որոշակի ուշացումը նաև այս ոլորտում համակարգված գիտելիքի պակասի հետևանք է. ինչ խոսք, Հայաստանում միշտ էլ եղել է հանրության հանդեպ ուշադիր վերաբերմունքի և պատասխանատվության ավանդույթ, սակայն վերջին երկու տասնամյակում, պայմանավորված տարաբնույթ սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառներով, այն մղված է եղել հետին պլան: Մինչդեռ, նոր իրողություններն ի հայտ են բերում նոր մարտահրավերներ, որոնց հաղթահարումը պահանջում է նոր մոտեցումներ:

Այս տարվա հոկտեմբերին ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության և 22 վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի համատեղ ջանքերով կազմակերպված «Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն» սեմինարը, թերևս, նպատակ էր հետապնդում լրացնել այդ բացը և հայաստանյան գործարար աշխարհի մասնակից ներկայացուցիչներին ցույց տալ այս գաղափարի գործնականում կիրառման հնարավոր տարբերակները և դրանցից ակնկալելի արդյունքները՝ կոնկրետ օրինակներով:

Սեմինարին դասախոսություններ կարդալու նպատակով հրավիրվել էին ոլորտի այնպիսի փորձագետներ, ինչպիսիք են Ռոտերդամի կառավարման դպրոցի և Ռոտերդամի էրազմուս համալսարանի պրոֆեսոր Թոյնիս Վիլեմ Հարդյոնոն, Բերթելսման հիմնադրամի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության նախագծի ղեկավար Աննա Փիթերսը, ISD ընկերության կորպորատիվ հաղորդակցության վարչության ղեկավար Վասիլի Արբուզովը և GTZ կազմակերպության Կենսաբազմազանության կայուն կառավարման ծրագրի ղեկավար Թոմաս Էբերհերրը:

Սեմինարի ընթացքում արծարծվեցին այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ Կորպորատիվ պատասխանատվության էությունը և կիրառման հիմնական ուղղությունները, նման մոտեցումից ակնկալվող արդյունքները և հեռանկարները, դրանց գնահատման չափանիշները և մեթոդները, սպասելի շահը և հասարակությանն այդ մոտեցման ճիշտ ներկայացման ուղիները:

Կորպորատիվ պատասխանատվության գաղափարախոսությունը կիրառելի է գիտության, կրթության, սպորտի, առողջապահության, շրջակա միջավայրի պահպանության, ինչպես նաև կորպորատիվ էթիկայի և գործարար միջավայրի ձևավորման ասպարեզում:

Հայաստանյան շուկայում ՎիվաՍել-ՄՏՍ-ը մշտապես եղել և մնում է Կորպորատիվ պատասխանատվության մոտեցման կիրառման առաջատար: Սակայն հուսով ենք, որ մեր մոտեցումը լայն տարածում կգտնի Հայաստանում գործող այլ ընկերությունների և կազմակերպությունների շրջանում: Հավատացած ենք, Կորպորատիվ պատասխանատվությունը երկարաժամկետ արդյունավետ ներդրում է, որ ծառայում է ոչ միայն մեկ ընկերության բարօրությանը, այլև՝ երաշխավորում է ողջ երկրի բարգավաճումը:

CORPORATE RESPONSIBILITY – LONG–TERM LUCRATIVE INVESTMENT

In the last decade the notion of Corporate Responsibility has grown from a simple act of benevolence into a business strategy. Today the companies operating in Armenia – be they small, medium, or large, – move, though somewhat slowly, to acknowledging the concept of Corporate Responsibility as a basis of their strategies. This means, the feeling of responsibility for one's co–citizens, society, and the state, awakens. Moreover, there is a growing understanding that the activity based on the concept of Corporate Responsibility is not just a manifestation of generosity, but a long–term investment aimed at the perspective development of one's own business.

As we perceive it, the somewhat delay in the development of such attitude in our country is a result of also the lack of systemized knowledge in the sphere: definitely, Armenia always had the tradition of particular attention and responsibility for the public, but the various social–economic and political factors in the last two decades have pushed it to the backyards of social consciousness. Meanwhile, the new realities bring new challenges and overcoming them requires new approaches.

The "Corporate Social Responsibility" Seminar organized this October in a joint effort by VivaCell–MTS and the Fund for Preservation of Wildlife and Cultural Assets of the Republic of Armenia, in this light, aimed to fill the gap and show the participating representatives of the Armenian business sector the possible ways of application of this approach and expected revenues, inferred from particular cases.

The seminar brought together prominent experts of the sphere including Prof. Dr. Ing. Teunis Willem Hardjono from the Rotterdam School of Management/ Erasmus University Rotterdam, Anna Peters, Corporate Social Responsibility Project Manager at Bertelsmann Foundation, Vasily Arbuzov, the Head of the Corporate Communications Department at ISD corporation, and Thomas Eberherr, the Team Leader at GTZ Sustainable Management of Biodiversity Program in Armenia.

The participants touched upon the topics such as the essence and the major directions of application of the Corporate Responsibility approach, the anticipated results and the perspectives of its application, the criteria and the methods of evaluation, expected interest and the way to best communicate the concept to the public.

The Corporate Responsible approach is applicable in the spheres of science, education, sports, healthcare, environmental protection, as well as corporate ethics and in formation of business environment.

In the Armenian market VivaCell–MTS was and remains a leader in applying the Corporate Responsible approach. Hopefully, though, our approach will be accepted also by other companies and organizations operating in Armenia. We believe, the Corporate Responsibility is a long–term lucrative investment that does not just serve one company's well–being, but guarantees the prosperity of a whole country.

ՎիվաՍել-ՄՏՍ-ի ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

1. ՎիվաՍել-ՄՏՍ-ը՝ երեխաներին

Համագործակցություն՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման սրահներում երեխաների նկարչական աշխատանքների ցուցահանդեսի կազմակերպման մեջ

Համագործակցություն՝ «Արևի հետքերով» հեքիաթների ժողովածուի շնորհանդեսի կազմակերպման մեջ

Համագործակցություն՝ Ծաղկաձորում «Արևորդի» 2009 ամառային դպրոցի կազմակերպման մեջ

Համագործակցություն՝ «Օրրան» բարեգործական կազմակերպության հետ

«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների միջազգային փառատոնի հովանավորություն

«Ռե-անիմանիա» անիմացիոն ֆիլմերի երևանյան միջազգային փառատոնի մանկական ծրագրի հովանավորություն

«Ամառային ներշնչանք» երեխաների ստեղծագործական աշխատանքների մրցույթ

Աջակցություն՝ Երևանի ծննդատների նորածնային խնամքի բաժանմունքների համար սարքավորման ձեռքբերման մեջ

Աջակցություն՝ Սիսիանի մանկապարտեզի կահավորման մեջ

Աջակցություն Գյումրիի մանկատանը՝ Սանկտ-Պետերբուրգում գեղարվեստի աշխատանքների մրցույթում մասնակցության կազմակերպման մեջ

Աջակցություն՝ Զարենցավանի մանկապարտեզի վերանորոգման կազմակերպման մեջ

Աջակցություն՝ Գեղադիր գյուղի դպրոցի վերանորոգման կազմակերպման մեջ

Աջակցություն՝ Վանաձորի տիկնիկային թատրոնի վերանորոգման կազմակերպման մեջ

Համագործակցություն՝ «Արևորդի» միջազգային բնապահպանական փառատոնի հետ

2. ՎիվաՍել-ՄՏՍ-ը՝ մշակույթի բարեկամ

«Տաղանդների կառավարում» ազգային առաջին խորհրդաժողովի հովանավորություն

Համահայկական օլիմպիադայի շրջանակներում հայոց լեզվի և գրականության մրցույթի հովանավորություն

Համագործակցություն՝ Հայկական հուշարձանների ճանաչման ծրագրի հետ

Համագործակցություն՝ «Ոսկե ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամի հետ

Համագործակցություն՝ «Ազգային պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոնի հետ

«Բաց երաժշտություն» փառատոնի հովանավորություն

Վերադարձի փառատոնի հովանավորություն

VivaCell-MTS CORPORATE RESPONSIBILITY PROJECTS

1. VivaCell-MTS to Children

Partnership in organization of children paintings exhibition at VivaCell-MTS Service Centers
Partnership in organization of presentation of the Following the Sun fairy tale book
Partnership in organization of SunChild Summer School 2009 in Tsakhkadzor
Partnership with Orran benevolent non-governmental organization
Sponsorship of the Tumanyan Fairy Tale Day International Festival of Puppet Theaters
Sponsorship of the Re-Animania Animation Film Festival children program
Summer Inspiration children creativity competition
Support in equipping Neonatal Care Departments and Centers
Support in furnishing of kindergarten in Sisian
Support to Gyumri children home for participation in fine arts competition in St. Petersburg
Support in renovation of kindergarten in Charentsavan
Support in renovation of school in Geghadir village
Support in renovation of Vanadzor Puppet Theater
Partnership with SunChild International Environmental Festival

2. VivaCell-MTS Culture's Friend

Sponsorship of Talent Management First National Conference
Sponsorship of Armenian Language and Literature Competition, within the Pan-Armenian Olympiad
Partnership with Armenian Monuments Awareness Project
Partnership with the Golden Apricot Fund for Cinema Development
Partnership with the National Gallery International Music Festival
Sponsorship of the Open Music Fest
Sponsorship of the Return Festival
Sponsorship of the Yerevan staging of Spartacus ballet
Partnership with the SunChild International Environmental Festival
Sponsorship of the concert of Gary Kesayan Jazz Quartet

«Սպարտակ» բալետի երևանյան բեմադրման հովանավորություն
Համագործակցություն՝ «Արևորդի» միջազգային բնապահպանական փառատոնի հետ
Գարի Քեոսայանի ջազ քառյակի երևանյան համերգի հովանավորություն

3. ՎիվաՍել-ՄՏՍ՝ սպորտի գործընկեր

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հովանավորություն
Հայաստանի կարատեի ֆեդերացիայի հովանավորություն
Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի հովանավորություն
Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիայի հովանավորություն

4. Կարիերայի զարգացման ծրագրեր

ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրենի դասախոսությունները Հայաստանի բուհերում
Բաց դռների օրեր դպրոցականների համար՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխամասային գրասենյակում
Համագործակցություն՝ Հայաստանի 14 բուհի հետ

5. ՎիվաՍել-ՄՏՍ-ի այլ նախաձեռնություններ

Սահմանափակ կարողություններով մարդկանց արվեստի աշխատանքների ցուցահանդես՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոններում
Համագործակցություն՝ Հայաստանի ամերիկյան համալսարանում տեսակոնֆերանս դահլիճի ստեղծման մեջ
Արմավիրի մարզում հակակարկտային համակարգի տեղադրման ֆինանսավորում
«Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա հեռուստամարաթոնի կազմակերպման հովանավորություն
Աջակցություն՝ հայաստանյան միկրոէլեկտրոնիկայի օլիմպիադայի կազմակերպման մեջ
Հայկական կարմիր խաչի ընկերության հետ փոխըմբռնման հուշագրի ստորագրում
«Մեքենա վարելիս մի՛ խոսիր» ճանապարհային անվտանգության իրազեկման քարոզարշավ
Աջակցություն՝ Երևանի պետական համալսարանի դահլիճի վերակահավորման մեջ
Հայաստանի բազմազավակ մայրերի մեծարման միջոցառում
Աջակցություն՝ Երևանում խաղաղության այգու ստեղծման մեջ
Հաշմանդամ ուսանողների այցը ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխամասային գրասենյակ

3. VivaCell-MTS Sport's Partner

Sponsorship of the Football Federation of Armenia
Sponsorship of the Karate Federation of Armenia
Sponsorship of the National Olympic Committee of Armenia
Sponsorship of the Ski Federation of Armenia

4. Career Development Program

VivaCell-MTS General Manager's lectures at universities of Armenia
Open Door days for schoolchildren at VivaCell-MTS headquarters
Cooperation with 14 universities of Armenia

5. Other VivaCell-MTS Initiatives

Disabled people artworks exhibition at VivaCell-MTS Service Centers
Partnership in opening video conference hall at the American University of Armenia
Financing installation of anti-hail system in Armavir marz
Sponsorship of organization of Hayastan All-Armenian Fund Annual Telethon
Support in organization of Armenian Microelectronics Olympiad
Signing Memorandum of Understanding with Red Cross Society
Don't Talk and Drive road safety awareness campaign
Support in refurnishing the Hall at the Yerevan State University
Event honoring women with largest number of children in Armenia
Support in creation of Peace Park in Yerevan
Disabled students' visit to VivaCell-MTS headquarters

«ԱՄԱՌԱՅԻՆ ՆԵՐՇՆՉԱՆՔ» ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

«Ամառային ներշնչանք» նախագծի կարևորագույն գաղափարը երեխաների հոգում սեփական դպրոցի, քաղաքի և մարզի հանդեպ պատասխանատվության զգացումն արթնացնելն էր:
Մրցույթին մասնակցող՝ ազգային պարարվեստի, երգարվեստի, նկարչական, ասեղնագործական, բեմական արվեստի և լուսանկարչական աշխատանքները թեմատիկորեն կապված էին ՎիվաՍել-ՄՏՍ-ի հետ և պարունակում էին ընկերության կորպորատիվ նշանը:
Հաղթող հաստատություններին շնորհված մրցանակները ներառում էին համակարգիչներ, երաժշտական գործիքներ, տեխնիկա, կահույք, ինչպես նաև իրենց շենքերի վերանորոգման և կենցաղային պայմանների բարելավման համար դրամական միջոցներ:
«Ամառային ներշնչանք» նախագիծը մեկնարկեց Լոռու մարզում: Դրա շրջանակներում միջոցառումներ անցան Արագածոտնում, Արմավիրում, Արարատում, Վայոց Ձորում, Սյունիքում, Կոտայքում, Գեղարքունիքում, Շիրակում և Տավուշում:

SUMMER INSPIRATION CHILDREN CREATIVITY COMPETITION

The main purpose of the Summer Inspiration project was to awaken in the hearts of schoolchildren the sense of responsibility for their school, town, and region.
The art works presented for the competition were represented in a variety of genres including folk dance, singing, painting, needlework, acting, and photography and were associated with VivaCell-MTS or displayed VivaCell-MTS corporate brand logo.
The prizes handed to the winning institutions upon the end of the competition included computers, musical instruments, equipment, furniture, as well as financial support for renovation and improvement of the conditions in the schools premises.
The Summer Inspiration project started in Lori, and reached all ten marzes of Armenia including Aragatsotn, Armavir, Ararat, Vayots Dzor, Syunik, Kotayk, Gegharkunik and Shirak regions, and was finalized in Tavush.

VIVA
MTS

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ «ԱՐԵՎԻ ՀԵՏՔԵՐՈՎ» ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵՋ

22 վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի և ՎիվաՍել-ՄՏՍ-ի համատեղ նախաձեռնությամբ «Պահպանի՛ր բնությունը» նախագծի շրջանակներում Խնկո-Ապոր անվան գրադարանում այս տարի կազմակերպվեց երեխաների հեղինակած «Արևի հետքերով» հեքիաթների գրքի շնորհանդեսը:

Գրքի բոլոր հեքիաթների և նկարազարդումների հեղինակ երեխաները նման կերպ կոչ արեցին խնամքով վերաբերվել մեզ շրջապատող բնությանը:

Գրքում զետեղված հեքիաթներից երեքը նաև բեմականացվեցին՝ Խնկո-Ապոր անվան գրադարանի մանկական թատերախմբի ջանքերով:

Լույս է տեսել նաև գրքի աուդիո տարբերակը:

PARTNERSHIP IN ORGANIZATION OF PRESENTATION OF THE FOLLOWING THE SUN FAIRY TALE BOOK

The presentation of the Following the Sun fairy tale book written and illustrated by young children held at the Khnko-Aper Library was organized in the framework of Save the Nature campaign in a joint effort by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets in the Republic of Armenia and VivaCell-MTS.

The book was a call by the young authors of the book for careful attitude to the nature around us.

Three of the fairy tales were staged by the theatrical company of the Library.

The fairy tale collection is also available in audio version.

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ «ԱՐԵՎՈՐԴԻ» 2009 ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵՋ

Հայաստանի տարբեր մարզերի և Արցախի հիսունից ավելի բնասեր պատանիների «Արևորդի» ամառային դպրոցում համախմբելու նախաձեռնությունը մեր երկրի կենսաբազմազանության պահպանման հիմնախնդրում երիտասարդության իրազեկման բարձրացմանն ուղղված ևս մեկ նախագիծ էր:

Հովանավորելով 22 վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախագիծը՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ը Հայաստանի մարզերի էկոակումբների պատանիներին հնարավորություն ընձեռեց դասընթացներից հետո գիտելիքներն ի մի բերել գործնականում: Ծաղկաձորում անցկացված ամառային դպրոցում մասնակիցները սովորեցին կառավարել կենցաղային թափոնները, արևային ճառագայթների ջերմությունը կլանող սարքի միջոցով ստացան էլեկտրական էներգիա, պարբերաբար կազմակերպվող արշավների ընթացքում բացահայտեցին տեղի բնապահպանական խնդիրները և դրանց մասին պատմող ֆիլմ նկարահանեցին:

PARTNERSHIP IN ORGANIZATION OF SUNCHILD SUMMER SCHOOL 2009 IN TSAKHKADZOR

The initiative to bring together nature loving children from the regions of Armenia and Artsakh in the SunChild summer school was another project aimed at increasing the young generation's awareness on the problems of preserving the biodiversity in our country.

By sponsoring the project of the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets in the Republic of Armenia, VivaCell-MTS gave the children engaged in the eco-clubs of the Armenian regions a chance to sum up the knowledge gained during the course, in practice. The participants of the summer school in Tsakhkadzor learned to manage domestic waste, produced electric power by means of a sunray absorbing device, revealed the environmental problems of the locale during the regularly held expeditions, and reflected their discoveries in a documentary.

ՆԱՐՐԻ
ՆԱՐՐԻ
MTS
VIVA cell

VIVAcell
MTS
Ամենին քան օպերատոր

«ՎիվաՍել-ՄՏՍ՝ բիզնես, որն ունի առաքելություն» թեմայով դասախոսությունների շարքի կարևոր թեմաներից են եղել նաև նորարարությունների դերը բիզնես կառավարման մեջ և կորպորատիվ քաղաքացիության՝ ընկերության որդեգրած քաղաքականության նշանակությունը՝ երկրի ապագայի համար:

ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ 25 ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ / ԱՎԵԼԻ ՔԱՆ 15 ԲԱՑ ԴՌՆԵՐԻ ՕՐԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ-Ի ԳԼԽԱՄԱՍԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

ՎիվաՍել-ՄՏՍ-ը կիսում է կառավարման մշակույթի, նորարարական մոտեցումների ձևավորման և կիրառության, ինչպես նաև շարունակական տեխնոլոգիական կատարելագործման իր գաղտնիքները Հայաստանի ապագա մասնագետների հետ:

Այս տարի մեր երկրի մայրաքաղաքում և մարզերում գործող բուհերի ուսանողների և դասախոսական կազմի հետ պարբերական դարձած հանդիպումների ընթացքում ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրենը ներկայացրել է ընկերության գործունեության հինգ տարվա ընթացքում ձեռք բերված առաջադեմ փորձը և բացել հաջողության ՎիվաՍել-ՄՏՍ-ի գաղտնիքը:

Տարվա ընթացքում ընկերության գլխամասային գրասենյակում նաև կազմակերպվել են Բաց դռների օրեր՝ ուղղված դպրոցականներին ծանոթացնելու հաղորդակցության ժամանակակից ձևերից մեկին՝ բջջային կապին, կիրառության ոլորտներին և օգտագործման էթիկայի կանոններին:

MORE THAN 25 LECTURES AT UNIVERSITIES OF ARMENIA BY VIVACELL-MTS GENERAL MANAGER / MORE THAN 15 OPEN DOOR DAYS FOR SCHOOL-CHILDREN AT VIVACELL-MTS HEADQUARTERS

VivaCell-MTS shares the secrets of its management culture, development and application of innovative approaches, as well as the continuous technological advances with the future professionals of Armenia.

During the regularly organized meetings with students and faculty of the universities operating in the capital and the regions of Armenia, VivaCell-MTS General Manager Ralph Yirikian presented the experience of the Company gained within the five years since its inception, opening also the secret of VivaCell-MTS's success.

This year the Company also organized a series of Open Doors for schoolchildren aimed to get them familiarized with one of the modern kinds of telecommunication - the mobile communication, the spheres of its application and the ethics of its use.

Among the topics in the series of "VivaCell-MTS - Business with a Mission" lectures delivered by the Company's General Manager focused on, were the role of innovations in business management and the place of Corporate Responsibility for the future of our country.

ARMENIAN STATE UNIVERSITY
OF ECONOMICS
YEGHEGNADZOR BRANCH

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՍՆՁՈՐՍ ԲՈՒՀԻ ՀԵՏ

Այս տարի ՎիվաՍել-ՄՏՍ-ը փոխգործակցության համաձայնագիր ստորագրեց հայաստանյան 14 բուհի հետ: Այս համագործակցությունը նպատակ է հետապնդում զարգացնել դասախոսական անձնակազմի մասնագիտական հմտությունները և գիտելիքները, ինչպես նաև մշակել մասնագիտական որակավորման ժամանակակից պահանջներին բավարարող ուսումնական ծրագրեր:

Դա, մասնավորապես, ենթադրում է արտադրական և նախադիպլոմային պրակտիկա ՎիվաՍել-ՄՏՍ-ում, մասնագիտական առարկաների, գիտահետազոտական աշխատանքների, աշխատանքային ծրագրերի համատեղ կազմակերպում, ինչպես նաև դիպլոմային և մագիստրոսական թեզերի ղեկավարման հարցում՝ ընկերության աշխատակիցների ներգրավում:

COOPERATION WITH FOURTEEN UNIVERSITIES OF ARMENIA

This year VivaCell-MTS signed an agreement on cooperation with 14 universities of Armenia. The cooperation intends to widen the professional skills and knowledge of the faculty, as well as to develop curricula meeting the modern day requirements for professional preparedness.

This implies practical trainings and internships at VivaCell-MTS, joint development of special courses, research projects, working programs, as well as involvement of the Company's specialists in the instruction of bachelor and master theses of the university students.

VIVA
MTS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ՄԱՅՐԵՐԻ ՄԵԾԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Մայրության և գեղեցկության օրվա առթիվ ՎիվաՍել-ՄՏՍ-ն այս տարի կազմակերպեց հանրապետության տարբեր մարզերում բնակվող՝ յոթից տասնյոթ երեխա ունեցող բազմազավակ մայրերի մեծարման միջոցառում: Միջոցառման շրջանակներում ՎիվաՍել-ՄՏՍ-ն այս կանանց հանձնեց արժեքավոր նվերներ:

EVENT HONORING WOMEN WITH LARGEST NUMBER OF CHILDREN IN ARMENIA

On the occasion of the Motherhood and Beauty Day, VivaCell-MTS organized an event honoring women, who have large families with seven to seventeen children. In the framework of the event the Company also presented the families with valuable prizes.

MTC

MTC

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՅԳՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԵՋ

Երկրի օրվա առթիվ, ՎիվաՍել-ՄՏՍ-ի աջակցությամբ, մեկնարկեց «Կանաչ սերունդ» քարոզարշավը, որի շրջանակներում Հայաստանի տարբեր մարզերում, ի թիվս այլ միջոցառումների, կազմակերպվեցին ծառատունկ, ցուցահանդես, տարածքների կենցաղային աղբից մաքրում և այլն:

Երեխաների՝ բնապահպանական թեմայով նկարչական աշխատանքների ցուցահանդեսն անցավ ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոններում, իսկ միջոցառումների շարքը եզրափակվեց Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից տարածքում՝ խաղաղության այգու ստեղծումն ազդարարող մեծ ծառատունկով:

SUPPORT IN CREATION OF PEACE PARK IN YEREVAN

Supported by VivaCell-MTS, the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets in the Republic of Armenia organized a series of events, including tree planting, exhibition, waste removal, etc., in the framework of the Green Generation campaign, devoted to the Earth Day.

VivaCell-MTS Service Centers hosted the exhibition of children paintings on environmental issues, with the events summarized by a large tree planting initiative on the territory neighboring the St. Gregory the Illuminator church heralding the creation of the Peace Park in Yerevan.

ՄԿՐՃԿԿԱՆ ՕՐ
ՎՐՋԻՄ
ԲԱՂԱԲԸ
VIVA cell
MTS
Partners

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ «ՈՍԿԵ ԾԻՐԱՆ» ԿԻՆՈՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԵՏ

Արդեն չորս տարի շարունակ ՎիվաՍել-ՄՏՍ-ը սատար է կանգնում Հայաստանի մշակութային կյանքի ամենակենսունակ և հեռանկարային նախագծերից մեկին՝ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին:
Տարեցտարի իր սահմաններն ընդլայնող այս փառատոնի հիմնական նպատակներից են հայաստանյան կինեմատոգրաֆիական ավանդույթի պահպանումը և հետագա զարգացմանը նպաստելը:
Ընդամենը վեց տարի առաջ մեկնարկած այս փառատոնը միջազգային ասպարեզ է վերադարձրել հայաստանյան կինոարվեստը՝ ամեն տարի երևանյան երկնքի ներքո համախմբելով համաշխարհային ժամանակակից էկրանի դասականներին և խոշորագույն գործիչներին և, որ առավել կարևոր է, զարգացման հարթակ է առաջարկում Հայաստանի երիտասարդ արվեստագետներին: 2008-ին հիմնադրամը նաև ստեղծեց «Ոսկե ծիրան» բարձրագույն կինոդպրոցը:

PARTNERSHIP WITH THE GOLDEN APRICOT FUND FOR CINEMA DEVELOPMENT

For the 4th year in a row VivaCell-MTS has been supporting Golden Apricot International Film Festival – one of the most viable and perspective projects in the cultural life of Armenia.
One of the aims of the festival, expanding its boundaries year after year, is the preservation and the development of Armenian cinematographic tradition.
The festival, which started only six years ago, has returned the Armenian cinematography to international scene gathering under the Yerevan sky the contemporary classics and outstanding figures of the world cinema art, and, which is most important, serves a platform for the development of young artists of Armenia. In 2008 the Golden Apricot Fund for Cinema Development also opened Film School for young professionals.

2 000 000
2tt4/CHEQUE
GOLDEN APRICOT

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՐՎԵՍՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ՝ ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ-Ի ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ

2009-ին ՎիվաՍելլ-ՄՏՍ-ը միավորեց ջանքերը ֆիզիկական սահմանափակ կարողություններ ունեցող մարդկանց խնդիրներով զբաղվողների՝ «Փյունիկ» և «Փրկություն» հասարակական կազմակերպությունների հետ և այս տարի օգոստոսին ընկերության սպասարկման մի քանի կենտրոններում կազմակերպեց սահմանափակ հնարավորություններ ունեցողների խեցեգործական, նկարչական, ատաղձագործական և այլ աշխատանքների ցուցահանդես: Ցուցահանդեսի ընթացքում սպասարկման կենտրոններում տեղադրվեցին նաև հանգանակության արկղեր՝ կուտակված միջոցները ՀԿ-ների բարեգործական նպատակներին ծառայեցնելու համար:

DISABLED PEOPLE ARTWORKS EXHIBITION AT VIVACELL-MTS SERVICE CENTERS

In 2009 VivaCell-MTS joined hands with “Pyunik” and “Prkutyun” non-governmental organizations involved in the solution of the problems of people with disabilities in opening exhibition of their ceramic, painting, carpentry and other art works in VivaCell-MTS main service centers. Donation boxes located in the Service Centers throughout the exhibition were aimed to steer the collected means for the NGOs' project needs.

Մի եղիր անտարբեր,
դու կարող ես
շատ բան փոխել
Don't just watch
when you can make
a difference

ՀԱՇՄԱՆԴԱՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԸ ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ-Ի ԳԼԽԱՄԱՍԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

«Կրթական միջազգային շաբաթի» և հաշմանդամների իրավունքներին նվիրված միամյակի շրջանակներում ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխամասային գրասենյակում հյուրընկալվել են ավելի քան 50 հաշմանդամ ուսանող «Փյունիկ», «Հույսի կամուրջ», «Ունիսոն», «Դիալոգ» և «Սկարպ» հասարակական կազմակերպություններից՝ ծանոթանալու և անմիջականորեն շփվելու ՎիվաՍել-ՄՏՍ-ի հաշմանդամ աշխատակիցների հետ:

Նման հանդիպման նպատակը հանրության ուշադրությունը սահմանափակ կարողություններով մարդկանց ինտեգրման, նրանց կրթության և աշխատանքային իրավունքների հարցերին ևս մեկ անգամ հրավիրելն է:

ՎիվաՍել-ՄՏՍ ընկերությունն այն փոքրաթիվ ընկերություններից է, որոնք հավատացած են, որ հաշմանդամները բոլոր մարդկանց պես պետք է ունենան աշխատելու և կրթություն ստանալու հավասար իրավունքներ և հավասար մեկնարկային հնարավորություններ:

DISABLED STUDENTS' VISIT TO VIVACELL-MTS HEADQUARTERS

Within the framework of International Week of Education and the International Month of Disabled People, VivaCell-MTS headquarters hosted 50 handicapped students form “Pyunik”, “Huysi kamurj”, “Unison”, “Dialogue”, and “Skarp” non-governmental organizations, getting an opportunity to get acquainted and to communicate with the disabled employees of VivaCell-MTS.

The aim of such meetings was to once again draw the public attention to the issues of integration, as well as education and labor rights of these people.

VivaCell-MTS is among those few companies, which believe the disabled people have to have equal starting conditions and equal rights to get education and work, just like anyone.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման աշխարհագրությունը տարեցտարի ընդ-լայնվում է, վտանգելով ավելի ու ավելի մեծ թվով մարդկանց կյանքը: Մինչդեռ հիվանդության կանխարգելման կարևոր նախապայմաններ-ից մեկը հասարակության լայն շերտերի հիվանդության մասին հնա-րավորինս համապարփակ տեղեկացվածությունն է:

ՎիվաՍել-ՄՏՍ-ը և Հայկական կարմիր խաչի ընկերությունը խոցե-լի խմբերին օգնելու և հասարակության օգտին ջանքերը միավորելու պատրաստակամություն հայտնելով, ստորագրել են փոխըմբռնման հուշագիր, որով նախատեսվում է բնակչությանն իրազեկելուն ուղղված մի շարք երկարաժամկետ նախաձեռնությունների իրականացում:

SIGNING MEMORANDUM OF UNDERSTANDING WITH RED CROSS SOCIETY

The geography of the spread of HIV/AIDS expands annually threatening the lives of more and more people. One of the main preconditions to prevent the disease is the awareness of the large layers of society about it.

Expressing readiness to join efforts in supporting the vulnerable groups, VivaCell-MTS and Armenian Red Cross Society, signed a memorandum of understanding, which provides a series of long-term initiatives aimed at increasing the population awareness.

ՆԱ ՄԻԱՎ-Ը ՁԵՌՔ Է ԲԵՐԵԼ ԻՐ ՄԱՅՐԻԿԻՑ

ՊԱՅՔԱՐԵ՛ՆՔ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԴԵՄ

Armenian Red Cross Society

VIVAcell MTS

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԵՎԱՆԻ ԾՆՆԴԱՏՆԵՐԻ ՆՈՐԱԾՆԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՖԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԵՋ

Հայաստանում կյանքի առաջին քսանչորս ժամվա ընթացքում մանկական մահացության ցուցանիշը չորս անգամ գերազանցում է եվրոպական երկրներում գրանցվող տվյալները:

Նեոնատալ խնամքի անհրաժեշտ պայմանների ապահովմանն ուղղված աշխարհի տարբեր երկրներում գործունեություն ծավալած Birth-Link կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում ՎիվաՍել-ՄՏՍ-ն այս տարի հանձն առավ մայրաքաղաք Երևանի տասը ծննդատներում և նորածնային բաժանմունք ունեցող բուժհաստատություններում ինտենսիվ թերապիայի ժամանակակից սարքավորումների տեղադրման հետ կապված ծախսերը:

SUPPORT IN EQUIPPING NEONATAL CARE DEPARTMENTS AND CENTERS IN YEREVAN

The mortality rate in the first twenty four hours of the life among children in Armenia is four times higher than in European countries.

VivaCell-MTS, in cooperation with the BirthLink non-governmental organization, concerned with creating necessary conditions for neonatal care, undertook the purchasing of intensive therapy equipment for ten maternity hospitals and neonatal departments in Yerevan.

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՍՊՈՐՏԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցության ձեռք է մեկնում Հայաստանում անցկացվող սպորտային տարբեր միջոցառումների կազմակերպմանը, այդ թվում՝ լեռնադահուկային սպորտի այս տարի կայացած միջազգային մրցաշարին, որի մասնակիցը դարձան աշխարհի տասնմեկ պետության քսանութ մարզիկ:
ՎիվաՍել-ՄՏՍ-ի հոգածությունը Հայաստանում սպորտի զարգացմանը համահունչ է ընկերության՝ հայաստանյան նման նախաձեռնություններին աջակցելու ստանձնած պարտավորությանը:
Այս տարի ընկերությունը նաև համագործակցեց Հայաստանի ֆուտբոլի և կարատեի ֆեդերացիաների հետ:

SPONSORSHIP OF ARMENIAN SPORTS

VivaCell-MTS supports in organizing various sports events in Armenia, including the international skiing competition in Armenia among twenty eight sportsmen from eleven countries held this year.
VivaCell-MTS's care for the development of sports in our country is in line with the Company's commitment to support Armenian initiatives. This year the Company also extended hand to the football and karate federations.

VIVA


ALPINE INTERNATIONAL COMPETITIONS
FIS

5

ARMENIA

19

13
22

«ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ ՕՐ» ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Այս տարվա սեպտեմբերին հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդավայր Դսեղում անցկացված «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների չորրորդ միջազգային փառատոնի հիմնական ծրագրում ընդգրկված էին Լիտվայի, Հունգարիայի, Սլովենիայի, Վրաստանի և ԼՂՀ տիկնիկային թատերախմբերի ներկայացումները:

Փառատոնի շրջանակներում անցկացվեցին նաև տիկնիկային արվեստի վարպետության դասեր, ցուցահանդեսներ, ամենօրյա երեկոյան ակումբներ, էքսկուրսիաներ և ֆիլմերի ցուցադրում:

ՎիվաՍել-ՄՏՍ-ի աջակցությունն այս փառատոնին ձեռագործ տիկնիկներում մարդկային երևակայության մարմնավորման արվեստի ավանդույթի՝ մեր երկրում պահպանմանը և զարգացմանը նպաստելու փորձ է:

SPONSORSHIP OF THE TUMANYAN FAIRY TALE DAY INTERNATIONAL FESTIVAL OF PUPPET THEATERS

The main program of the Tumanyan Fairy Tale Day 4th International Puppet Theater Festival held in world known Armenian poet Hovhannes Tumanyan's native village of Dsegh this September included performances by theatrical companies from Lithuania, Hungary, Slovenia, Georgia, and Nagorno-Karabakh Republic.

The program of the festival also included master classes in puppet art, exhibitions, daily evening clubs, excursions, and film screenings.

VivaCell-MTS's support to the festival celebrating the human fantasy embodied in handmade marionettes is an attempt to contribute to the preservation and the development of this tradition in our country.

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԵՏ

Արդեն երկրորդ տարին շարունակ ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցության ձեռք է մեկնում Հայկական հուշարձանների ճանաչման ծրագրին՝ մեր երկրի պատմամշակութային հուշարձանները տեղի և արտասահմանցի զբոսաշրջիկների համար առավել ներկայանալի դարձնելուն ուղղված նախաձեռնությունն իրականացնելու գործում:

Հայաստանի տարբեր մարզերում հինգ լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և իտալերեն, վահանակները տեղեկություն են պարունակում այս հուշարձանների վերաբերյալ: Դրանք տեղադրվել են՝ Քարահունջի աստղադիտական համալիրի, միջնադարյան Հայաստանի կրոնական և կրթամշակութային կենտրոններից մեկի՝ Գոշավանքի, Գեղարդավանքի, «Չարենցի կամարի», Գրիգոր Լուսավորչի կողմից կառուցված և Աշոտ Երկաթ թագավորի համար ապաստանավայր դարձած Սևանի վանքի, պատմական Գյումրիի, Հաղպատավանքի տարածքում և պատմամշակութային այլ վայրերում:

PARTNERSHIP WITH ARMENIAN MONUMENTS AWARENESS PROJECT

For the second year in a row VivaCell-MTS extends hand of support to the Armenian Monument Awareness Project in implementing the initiative of making the historical and cultural monuments of Armenia most attractive to the domestic and international tourists.

Information panels in five languages - Armenian, Russian, English, French, and Italian, are installed on the territory of the monument. The panels are available in the territory of Karahunj observatory complex, Goshavank, one of the religious and educational centers of medieval Armenia, Geghardavank, the Charents Arch, the Sevan Monastery build by Gregory the Illuminator and serving a haven for King Ashot Yerkat, historic Gyumri, Haghpat monastery, and other locales.

USAID | ARMENIA
VIVA
MTS

«ՄԵՔԵՆԱ ՎԱՐԵԼԻՍ ՄԻ՛ ԽՈՍԻՐ» ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ

Վիճակագրության համաձայն, ճանապարհատրանսպորտային պատահարների շուրջ քսանհինգ տոկոսն ընթացքի ժամանակ բջջային հեռախոս օգտագործելու հետևանք է:
Հասարակության տեղեկացվածությունն ապահովելու և մարդկանց կյանքին սպառնացող հնարավոր վտանգները կանխելու համար, ՎիվաՍել-ՄՏՍ-ը պատրաստակամություն է ցուցաբերում զոհաբերել իր եկամտի մի մասը՝ հանուն մեր քաղաքացիների անվտանգության:
Այս քարոզարշավի շրջանակներում ընկերությունը հանդես եկավ նոր նախաձեռնությամբ, որով բոլոր վարորդներին կոչ է արվում ավտոմեքենա վարելիս հրաժարվել հեռախոսազանգեր կատարելուց, ընդունելուց, ինչպես նաև հաղորդագրություններ գրելուց կամ կարդալուց:

DON'T TALK AND DRIVE ROAD SAFETY AWARENESS CAMPAIGN

According to the existing statistics about 25 percent of road accidents occur as a result of mobile phone use while driving.
To provide awareness of the public and to prevent the possible threat to human life, VivaCell-MTS expressed readiness to compromise on generated calls for the safety of our co-citizens.
In the frame of this campaign the Company came up with a new initiative calling the drivers to keep from making or answering calls, writing and receiving messages, while driving.

Մեքենա վարելիս
մի՛ խոսիր
www.vivacell.am
VIVAcell
MTS

«ՍՊԱՐՏԱԿ» ԲԱԼԵՏԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԲԵՄԱԴՐՄԱՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Երկար ընդմիջումից հետո, հանրահայտ բալետմայստեր Յուրի Գրիգորովիչի ջանքերով Հայաստանում վերստին բեմադրվեց մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետը:
ՎիվաՍել-ՄՏՍ-ին հաջողվեց նպաստել հանդիսատեսին մշակութային այս խոշոր իրադարձությունը ներկայացնել պատշաճ մակարդակով:
Երևանում «Սպարտակի» բեմադրությունը կայացավ ՀՀ և ՌԴ նախագահների տիկնանց՝ Ռիտա Սարգսյանի և Սվետլանա Մեդվեդևայի բարձր հովանու ներքո:

SPONSORSHIP OF THE YEREVAN STAGING OF SPARTACUS BALLET

After a long break the famous Spartacus ballet by great composer Aram Khachaturyan was staged under guidance of prominent choreographer Yuri Grigorovich.
VivaCell-MTS managed to facilitate the presentation of this significant cultural event on a proper level.
The performance in Yerevan was made possible under the high patronage of the first ladies of Armenia and Russia – Rita Sargsyan and Svetlana Medvedeva.

ARARAT



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ «ԱՐԵՎՈՐԴԻ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻ ՀԵՏ

22 վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը ՎիվաՍել-ՄՏՍ-ի հետ համատեղ «Արևորդի» տարածաշրջանային բնապահպանական փառատոնն առաջին անգամ իրականացրեց 2007 թվականին: «Արևորդին» միակ բնապահպանական փառատոնն է հարավկովկասյան տարածաշրջանում և անց է կացվում ամեն երկրորդ տարին: Այս տարի երկրորդ անգամ կայացավ «Արևորդի»՝ արդեն միջազգային բնապահպանական փառատոնը:

Փառատոնի նպատակն է հասարակության ուշադրությունը բևեռել վայրի բնության և բնապահպանության վրա և բարձրացնել հասարակության գիտակցության մակարդակն այս հարցում, ընդգրկել հասարակության բոլոր շերտերը՝ երեխաներին, երիտասարդներին, գործարար հանրությանը, ինչպես նաև շարքային քաղաքացիներին:

PARTNERSHIP WITH SUNCHILD INTERNATIONAL ENVIRONMENTAL FESTIVAL

In 2007 FPWC in cooperation with VivaCell-MTS held the first SunChild International Environmental Festival. SunChild is the only environmental festival in the South Caucasus and is held every second year. The second, now already international, SunChild Festival, took place this year.

The aim of the festival is to focus public attention on wildlife and nature preservation issues, raise awareness around those issues targeting all groups of the society - children, youth, businessmen, as well as ordinary citizens.

ԲՆՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝
ՏԵՍԵՍՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ
ԳՐԱՎԱԿԱՆ։



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ «ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻ ՀԵՏ

«Ազգային պատկերասրահ» երաժշտական փառատոնը դասական երաժշտության և կերպարվեստի համադրության գեղեցիկ օրինակ է, որը հնարավորություն է տալիս արվեստի այս ձևերից յուրաքանչյուրին ձեռք բերել նոր հնչողություն՝ նոր լույսի ներքո:

Հայաստանի ազգային պատկերասրահի որմնանկարների դահլիճում անցկացված համերգաշարի հիմնական նպատակը հանրահայտ, ինչպես նաև Հայաստանում դեռ ճանաչում չունեցող հայ և օտարերկրացի երաժիշտների կատարմամբ դասական երաժշտության նմուշների ներկայացումն է արվեստասեր հասարակությանը:

PARTNERSHIP WITH THE NATIONAL GALLERY INTERNATIONAL MUSIC FESTIVAL

The National Gallery Music Festival is an example of beautiful combination of musical and painting arts, which gives opportunity to gain them a new phonation in a new light.

The major aim of the series of concerts held in the fresco hall of the National Gallery of Armenia was to present the arts lovers with classic music performances by Armenian and foreign musicians – both recognized and not yet widely known in Armenia.

VIVA
Հայաստանի
առաջատար
բջջային
օպերատոր

«ԲԱՑ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ՓԱՌԱՏՈՆԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Այս տարի ևս ՎիվաՍել-ՄՏՍ-ը աջակցության ձեռք մեկնեց երաժշտասեր լսարանին ծառայող նոր նախաձեռնություններին: Դրանց շարքում իր տեսակի մեջ եզակի միջոցառում էր «Բաց երաժշտություն» փառատոնը, որը երևանյան աստղազարդ երկնքի տակ համախմբեց ջազ, դասական, ֆոլկ և ռոք երաժիշտներին՝ արվեստի հայաստանցի և օտարերկրյա սիրահարներին նվիրելով ամառային անմոռանալի երեկոներ:

SPONSORSHIP OF THE OPEN MUSIC FEST

This year again VivaCell-MTS stretched hand of support to new initiatives aimed for the music-loving public. Unique in its kind among them was the Open Music Fest that hosted Armenian and foreign jazz, classic, folk, and rock musicians under the Yerevan sky and gave the local and foreign music lovers unforgettable Indian summer nights.

ՎԵՐԱԴԱՐՁԻ ՓԱՌԱՏՈՆԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Մշակույթի նկատմամբ հատուկ հոգածության պատրաստակամությամբ, ՎիվաՍել-ՄՏՍ-ը, բացառիկ հովանավորի կարգավիճակով, շարունակեց աջակցել երաժշտասեր ու բարձրաճաշակ հայ լսարանին ծառայող նախաձեռնություններին: Վերադարձի դասական երաժշտության երրորդ փառատոնի շնորհիվ, մեկ հարկի տակ համախմբվեցին վերջին երկու տասնամյակի ընթացքում Հայաստանից հեռացած հայ երաժիշտները, և դասական երաժշտության սիրահարները հնարավորություն ստացան ունկնդրելու արտերկրի բեմերում ճանաչում ձեռք բերած, հայազգի տաղանդավոր երիտասարդների կատարումները:

Արվեստի գրավչությունը ներկայացնելուն զուգահեռ, փառատոնի հիմքում կար համայն հայությանն ուղված կոչ՝ արարելու ու ստեղծագործելու սեփական երկրում:

SPONSORSHIP OF THE RETURN FESTIVAL

VivaCell-MTS readily stretched hand of support to initiatives aimed for the classic music-loving public of Armenia. The Return Third Festival of Classic Music brought together musicians who had left Armenia in the last two decades giving the music-loving public an opportunity to appreciate the performance of renowned musicians.

Along with presenting the listeners with just another occasion to listen to beautiful music, the festival was also a call to Armenians to work and create in the homeland.

More than
operator

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

6 ՎիվաՍել–ՄՏՍ–ի գլխավոր տնօրենի խոսքը
8 Կորպորատիվ պատասխանատվություն՝ երկարաժամկետ արդյունավետ ներդրում
10 ՎիվաՍել–ՄՏՍ–ի կորպորատիվ պատասխանատվության քաղաքականության շրջանակներում իրականացված ծրագրեր
14 «Ամառային ներշնչանք» երեխաների ստեղծագործական աշխատանքների մրցույթ
18 Համագործակցություն՝ «Արևի հետքերով» հեքիաթների ժողովածուի շնորհանդեսի կազմակերպման մեջ
20 Համագործակցություն՝ Ծաղկաձորում «Արևորդի» 2009 ամառային դպրոցի կազմակերպման մեջ
24 ՎիվաՍել–ՄՏՍ–ի գլխավոր տնօրենի ավելի քան 25 դասախոսությունները Հայաստանի բուհերում
/ Ավելի քան 15 Բաց դռների օրեր դպրոցականների համար՝ ՎիվաՍել–ՄՏՍ–ի գլխամասային գրասենյակում
26 Համագործակցություն՝ Հայաստանի 14 բուհի հետ
28 Հայաստանի բազմազավակ մայրերի մեծարման միջոցառում
30 Աջակցություն՝ Երևանում խաղաղության այգու ստեղծման մեջ
34 Համագործակցություն՝ «Ոսկե ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամի հետ
36 Սահմանափակ կարողություններով մարդկանց արվեստի աշխատանքների ցուցահանդես՝ ՎիվաՍել–ՄՏՍ–ի սպասարկման կենտրոններում
38 Հաշմանդամ ուսանողների այցը ՎիվաՍել–ՄՏՍ–ի գլխամասային գրասենյակ
40 Հայկական կարմիր խաչի ընկերության հետ փոխըմբռնման հուշագրի ստորագրում
42 Աջակցություն՝ Երևանի ծննդատների նորածնային խնամքի բաժանմունքների համար սարքավորման ձեռքբերման մեջ
44 Հայաստանյան սպորտի հովանավորություն
48 «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների միջազգային փառատոնի հովանավորություն
52 Համագործակցություն՝ Հայկական հուշարձանների ճանաչման ծրագրի հետ
56 «Մեքենա վարելիս մի՛ խոսիր» ճանապարհային անվտանգության իրազեկման քարոզարշավ
58 «Սպարտակ» բալետի երևանյան բեմադրման հովանավորություն
60 Համագործակցություն՝ «Արևորդի» միջազգային բնապահպանական փառատոնի հետ
64 Համագործակցություն՝«Ազգային պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոնի հետ
66 «Բաց երաժշտություն» փառատոնի հովանավորություն
68 Վերադարձի փառատոնի հովանավորություն

TABLE OF CONTENT

6 VivaCell–MTS General Manager's Address
9 Corporate Responsibility – Long–term Lucrative Investment
11 VivaCell–MTS Corporate Responsibility Projects
14 Summer Inspiration children creativity competition
18 Partnership in organization of presentation of the Following the Sun fairy tale book
20 Partnership in organization of SunChild Summer School 2009 in Tsakhkadzor
24 More than 25 lectures at universities of Armenia by VivaCell–MTS General Manager / More than 15 Open Door days for schoolchildren at VivaCell–MTS headquarters
26 Cooperation with 14 universities of Armenia
28 Event honoring women with largest number of children in Armenia
30 Support in creation of Peace Park in Yerevan
34 Partnership with the Golden Apricot Fund for Cinema Development
36 Disabled people artworks exhibition at VivaCell–MTS Service Centers
38 Disabled students' visit to VivaCell–MTS headquarters
40 Signing Memorandum of Understanding with Red Cross Society
42 Support in equipping neonatal care departments and centers in Yerevan
44 Sponsorship of Armenian sports
48 Sponsorship of the Tumanyan Fairy Tale Day International Festival of Puppet Theaters
52 Partnership with Armenian Monuments Awareness Project
56 Don't Talk and Drive road safety awareness campaign
58 Sponsorship of the Yerevan staging of Spartacus ballet
60 Partnership with SunChild International Environmental Festival
64 Partnership with the National Gallery International Music Festival
66 Sponsorship of the Open Music Fest
68 Sponsorship of the Return Festival

Ձևավորում՝ Լիլի Ալթունյան Տպագրություն՝«Փրինթինֆո»
Design: Lilie Altunyan Printing: "Printinfo"



Կորպորատիվ պատասխանատվություն

Corporate Responsibility

ՎիվաՍել-ՄՏՍ-ը Հայաստանին
VivaCell-MTS to Armenia
2009

ՎիվաՍել-ՄՏՍ
«Դ-Տելեկոմ» ՓԲԸ

Արգիշտի փողոց 4/1, Երևան 0015, ՀՀ
Հեռ. +374 10 568777, +374 93 568777
Ֆաքս. +374 10 569222, +374 93 569222
www.vivacell.am, info@vivacell.am

4/1 Argishty Street, Yerevan 0015, RA
Tel.: +374 10 568777, +374 93 568777
Fax: +374 10 569222, +374 93 569222
www.vivacell.am, info@vivacell.am